Եւ Եշի (22 Հոկտ.). երեկոյին ես առաք խաղող:

Ուրբաթի օրս (23 Հոկտ.) եասաղ արար ղայմախամն զղաւուխ և զմէստ՝ սաստիկ հրամանաւ, և ամենեքեան զկերպս իւրեանց ցածուցին խոնարհաբար յոյժ:

Շաբաթ (24 Հոկտ.). Տէր Աբրահամն վաղճանեցաւ Աշուշանցի[1]) Սուրբ Նիկողոսու:

Կիրակի (25 Հոկտ.). ի Թօփղափուն գնացաք ի տուն Գրիգորին և ի գերեզմաննոցն ի վերայ մօր Նորին և երեկոյին եկաք:

Գող մի գլխատեր էին ի Պարմաղափուն գիշերս որ լուսանայր Բշի (26 Հոկտ.). և էր Ղասում Իէ:

Ջշի (30 Հոկտ.). ի Խաչատուր կաթողիկոսէն եկն Տէր Տրդատ: Եւ օրս ես կանանց եղև եասաղ:

Նոյեմբեր ամիս օր Կիրակի: Ի գերեզմաներն զընացաք վասն տղայի Գրիգորին:

Հուի Շաբաթ (7 Նոյ.). ժողովեցան ի յԱստուածածին և բացին զթուղթ Յակոբին և առին թէ Գաբրիէլն երթայ: Երեկոյիս կիրակամուտ գնացաք:

Կիրակի (8 Նոյ.). զթուղթն կարդալ եաուն Յակոբ կաթողիկոսին. էսիլն պատարագեաց:

Բշի (9 Նոյ.). էֆէնտին մեծ փոխեցին:

Գշի (10 Նոյ.). զըստակն տարան և առին զնըւիրակութիւնն:

Ուրբաթ (13 Նոյ.). եկին ի Պօղազէն Հայք և ոչ են մտեալ ի վէզիրն և զերեսն ոչ ես տեսեալ երբեք: Եւ բերին զխապար Կէտուկ տէրտէրին որ մեռեալ է և թաղեալ են ի Կէլիպօլիս և եկեալ են: Եւ վէզիրն ես ելեալ անտի գնայ յէտրէնէ առ թագաւորն և կէսք մի զօրացն սակաւ սակաւ գային:

1) աշուշնցի.